ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Սույն ենթաբաժնի հասցեատերը լայն ընթերցող հասարակությունն է: Խմբագրությունս մտադիր է պարբերաբար անդրադառնալ Եկեղեցու, կրոնի պատմության հետաքրքրական դրվագների, հրապարակել հանրամատչելի նյութեր, որոնք լուսավորական-ուսուցական նշանակություն ունեն եւ կօգնեն հավատացյալին ավելի հստակ պատկերացում կազմելու ինչ-ինչ խնդիրների վերաբերյալ: Անդրադարձ կլինի այսօր Եկեղեցու հիմերը խարխլելու միտող «շարժումների», աղանդավորների գործունեությանը, պատասխան կստանան ընթերցողներին հուզող շատ հարցեր:

ԽՄԲ.

ԱՂԱՆԴԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներում մեզանում շոշափելի են դառնում համաշխարհայնացման (գլոբալիզացիա) ալիքները. ընտանիքներում, հասարակության լայն շերտերում, մշակույթի զանազան ճյուղերում եւ, մանավանդ, Հայ Եկեղեցու դեմ անընդմեջ հարձակումներում՝ հատկապես ԶԼՄ-ների միջոցով եւ այլն: Այս դեպքում, բնականաբար, հոգեւոր անվտանգության հարցը դարձյալ ուշադրության կենտրոնում պիտի հայտնվի: Իսկ հոգեւոր անվտանգությունը ապահովելու համար, ինչպես ռազմի դաշտում, պիտի նախօրոք պատրաստվել:

ԻԱ. դարի այս ժամանակներում, գրեթե ամեն ինչ ուղղված է ազգային ինքնության պահպանման դեմ եւ այն ոչնչացնելու նպատակ ունի: Ընդ որում եթե մենք պատրաստ չլինենք հակահարված տալու այդ կարգի մարտահրավերներին, կարող է շատ թանկ վճարենք: Հասկանալի է, որ պետք է չհասնենք այն բանին, որ Պատմությունն իր դաժան օրենքներով սրբագրության ենթարկի մեր այսօրվա բացառիկ իրադրությունը՝ անկախ պետականությունն ու անկախ Հայոց Եկեղեցին: Մի բան պետք է լավ հասկանանք, որ «վասն հաւատոյ» եւ «վասն Հայրենեաց» սկզբունքները պիտի գործեն միասին եւ միաժամանակ: Երբ կորցրել ենք Հայրենիքը՝ հավատը մեզ պահել է՝ մինչեւ վերագտել ենք կորցրածը: Բայց երբ կորցրել ենք հավատը՝ ինքներս ենք անհետացել Պատմության թատերաբեմից՝ Հայրենիքի հարցը ինքնըստինքյան մեկընդմիշտ թաղելով:

Փաստեր մեր պատմության էջերից կարելի է բերել գրեթե բոլոր ժամանակների համար:

Հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը Հայաստանյայց Եկեղեցին է, - գրում էր Գարեգին Հովսեփյանը դեռեւս Ի. դարի սկզբին (1907): Այս հիասքանչ եւ մշտանորոգ սկզբունքը կարելի է առանց փոփոխության տեղափոխել նաեւ ԻԱ. դար, այսինքն 100 տարի առաջ տալ:

Հավանաբար այս է պատճառը, որ պատմության այս ոլորաններում Հայոց Եկեղեցին է առաջին հերթին հալածանքի ենթարկվել:

Մենք՝ հայերս, որպես ժողովուրդ, մի զարմանալի հատկություն ունենք. մենք **եկեղեցակենտրոն** ազգ ենք (հոգեւոր հայրենիք) եւ **Արարատակենտրոն** (երկրավոր հայրենիք): Մեր ինքնությունը՝ առաջին հերթին մշակույթը, լեզուն, հավատը, միշտ պտտվել են այս երկու կենտրոնների շուրջ: Եւ ինչքան հեռացել ենք այս կենտրոններից, այնքան մեծացել է կործանման սպառնալիքը: Վկա՝ այսօրվա հայությունը. ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ Հայրենիքից դուրս:

Որո՞նք են այդ մարտահրավերները եւ սպառնալիքները:

Հասկանալի է, որ Հայաստանը, ինչպես նախկինում, այսօր եւս թատերաբեմ է համարվում բազմաթիվ կրոնական ուղղությունների համար, որոնք ուզում են «լույս» տարածել մեզանում, բայց իրականում՝ թե՛ արեւելքից, թե՛ արեւմուտքից, թե՛ հյուսիսից եւ թե՛ հարավից նրանց հարվածի թիրախը Հայ Եկեղեցին է՝ հոգեւոր Հայրենիքը:

Հոգեւոր պատերազմ

«Զգույշ եղեք, չլինի թե մեկը ձեզ գրավի ճարտարամտությամբ եւ սնոտի խաբեբայությամբ. դրանք մարդկային ավանդության եւ բնության տարերային ուժերի վրա են հիմնված եւ ոչ թե Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետության վրա» (Կողոս. Բ 8):

Պատերազմական դրությունը թելադրում է իր մարտավարությունը, եւ մենք առաջին հերթին պիտի ընդունենք այդ մարտահրավերն ու պատրաստվենք:

Առաջին քայլը թշնամուն լավ ճանաչելն է, նրա քայլերն իմանալն ու դրան հակահարված տալը:

Կրոնի պատմությունից հայտնի է «Երեք աստիճանների կանոնը». որը գործել եւ գործում է ցայսօր.

ա. առաջին աստիճան **- միսիոներ** (քարոզիչ),

բ. երկրորդ աստիճան - **տնտեսագետ,**

գ. երրորդ աստիճան - **զինվոր**:

ա. Միսիոներ

Մեզանում վերջին ժամանակներում գնալով երկրաչափական պրոգրեսիայով աճում է կրոնական կազմակերպությունների թիվը (այս պահին գրանցված են 65 կազմակերպություն, մոտ 15 տարբեր կրոնական ուղղություններով):

Փաստ է, որ այսօր Հայաստանում գործող «Խղճի ազատության օրենքը» միայն Հայ Եկեղեցու համար է գրված. մնացած բոլոր կրոնական կազմակերպությունների համար այդ օրենքը չի գործում: Մորմոնը հանգիստ կարող է մտնել Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, թերթիկներ տարածել. դիտողության կամ դուրս հրավիրելու դեպքում՝ ԱՄՆ պետդեպարտամենտի ամենամյա հաշվետվության մեջ համապատասխան «գնահատականը»

կտրվի մեզ: «Եհովայի վկան» կարող է հոգեորսություն անել անմիջապես Հայ Եկեղեցու կանոնական տարածքում, եւ, դիտողություն անելու պարագային, սպառնալ հայ հոգեորականին. սա մերօրյա իրականությունն է:

Այս ասպիճանում գործում է մեկ ուրիշ կանոն՝ «Երեք թիրախների կանոն»-ը:

ա. Առաջին թիրախ - **ընտանիք**,

բ. Երկրորդ թիրախ - **դպրոց**,

գ. երրորդ թիրախ - **եկեղեցի**:

Առաջին թիրախ

Ընտանիքը, նրա կայունությունն ու ամրությունը մեր գոյատեւման առհավատչյան է. ինչքան թույլ եղավ հայ ընտանիքը, այդքան թույլ կլինի դրանով պայմանավորված ամեն ինչ. հայությունն ու պետականությունը, բանակն ու հայրենիքը...

Ավելին. հայտնի է, որ դեռ կյանք չմտած մանուկները կրոնական կազմակերպությունների հիմնական «հումքն» են հանդիսանում: Հայտնի օրենք է. եթե քոնն են 18-25 տարեկան երիտասարդները, ապա քոնը կլինի այդ ժողովուրդը 10-20 տարի հետո: «Ազատության» եւ «մարդու իրավունքների պաշտպան» զանազան կազմակերպությունների միջոցով մեզանում ներմուծվում են ընտանիքը «քայքայող» սկզբունքներ, որոնք, արդեն զարմանալի չէ, հայերիս ձեռքով է արվում: Ընդամենը վերջերս՝ 2009-ին, Երեւանում մարտի 8-ի կապակցությամբ շատ երիտասարդական հասարակական կազմակերպություններ «շոու» կազմակերպեցին՝ թաղելով «կարմիր խնձորը»: Ոմանք լուրջ չվերաբերվեցին այս երեւույթին, բայց հասկանալի է, որ դա այս թիրախի իրականացումների շղթայի մի օղակն է ընդամենը: Այդ իրավապաշտպանները փաստորեն քարոզում են բացահայտ անառակություն՝ տարիքային հենց այս սպեկտրում: Մեր կարծիքով սա ավելի վտանգավոր սպառնալիք է, քան մեր հարեւանների բանակներն ու ռազմատենչ կոչերը:

ՋԼՄ-ների էրոտիկ ֆիլմերը, օկուլտ զանազան գրավիչ ուսմունքների բացահայտ քարոզությունները, հորոսկոպներ, չինական վագրեր ու մկներ, ՋԹՕ-ներ, «Էմո» եւ «Գոտ»-երի հավաքները ՋԼՄ-ներով գովազդելն հայ ՋԼՄ-ներում նորություն չէ: Գրախանութները հեղեղված են սատանիզմի, Կասպանեդայի (նարկոտիկների միջոցով գիտակցության շեղում - ընդլայնում) ուսմունքների մասին գրքեր (ընդ որում շքեղ տպագրություններ): Զանազան ասպղերի գովազդը (որոնք գրեթե բոլորն էլ թմրամոլներ են եղել - սկսած բիթլներից, ռոլինգներով եւ այլն), զվարճանքի ու խաղատների բացահայտ գովազդը եթերում՝ ուղղակի անբարոյականության դրսեւորումներ են - այս բոլորը՝ մեր ձեռքերով:

Երկրորդ թիրախ - դպրոց կամ մշակույթ

Մենք որպես ժողովուրդ մշակույթով ենք ի հայտ եկել պատմության մեջ, եւ մշակույթն է, որ անանց կատեգորիա է, մեր անձնագիրը, մեր ինքնությունը: Պետք է հասկանանք, որ որպես մշակույթի կրող մենք արժեք ենք ներկայացնում այս արեւի տակ: Մեր գեղեցիկ աչքերը չէ, որ գրավում են եւրոպացիներին ու ամերիկացիներին, այլ մեր մշակույթը՝ քրիստոնեական արժեքներով ձեւավորված: Այս է պատճառը, որ կրոնական կազմակերպությունները մեզանում մշակութակործան քարոզություն են անում, որովհետեւ այդ կորցնելու պարագային է, որ իրենց ձեռքը կընկնենք, այսինքն՝ կկորչենք:

Մեր մշակույթի հիմնական բաղադրիչներից է լեզուն. եթե մենք սուրբ չպահենք մեր

լեզուն, ոչ մի օրենք այն չի կարող պահպանել: Լեզվակիրները՝ հայերը պիտի գնահատեն մայրենին՝ ամեն տեղ ամեն ժամանակ:

Երրորդ թիրախ - եկեղեցին

Եկեղեցին միայն հոգևորականները չեն. եկեղեցին ժողովուրդն է (եկեղեցի բառը հունարենում հենց այդ էլ նշանակում է): Մեր եկեղեցին պետք է մտնի մեր ժողովրդի կենցաղի մեջ, դառնա նրա անբաժանելի մասը՝ ինչպես առաջ էր:

Ցավոք, հենց մեր ձեռքով էլ հարվածում են եկեղեցուն: Պատմությունը վերանայելու ու նոր չափանիշներով վերագնահատելու մեր Եկեղեցու անցյալը, սրբություններն ու սրբերին - նորություն չէ: Ս. Վարդանին եւ Վարդանանց շարժմանը նոր գնահատականներ տալը՝ վերջին ժամանակների արդյունք է[1]:

բ. երկրորդ աստիճան - տնտեսագետ

Երբ միսիոներն իր գործն անում վերջացնում է, դրան հետեւում է - **տնտեսագետը**. միանգամից բացվում են բազմաթիվ «բարեգործական» կազմակերպություններ, ներդրվում են բազմաթիվ բիզնես-ծրագրեր ... Մանավանդ կարեւորվում են անվճար հիվանդանոցները, դպրոցները, սկսվում է «ուղեղների» արտահոսք դեպի այլ երկրներ, չի խթանվում տեղական գործարարությունը...

Այս վիճակին արդեն առանց արգելքի հետեւում է ...

գ. Երրորդ աստիճան - զինվորը

Այսինքն **ուժը**: Եւ վերջ: Ինչ կար, այլեւս չկա...

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

1 Ի միջի այլոց նույն երեւույթին ականատես ենք լինում նաեւ Ռուսաստանի նորագույն պատմությունը սրբագրող «գիտունների» գրություններում. դավաճան են հանում Ռուս Եկեղեցու սրբերից Ս. Ալեքսանդր Նեւսկուն, Պետրոս Մեծ կայսրին եւ այլն: Բայց հիշենք Quod licet Jovi, non licet bovi (այն ինչ կարելի է Զեւսին, չի կարելի եզին). մենք իրավունք չունենք պատմության հետ խաղ խաղալ, այն էլ վտանգավոր: